

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 02.11.2020թ. թիվ 2011822819 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու

մասին
<< 28 > 12 2020թ. 7-13 - 16132

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Հրայր Սուքիասյանի ՄԴ/157947-20 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի փողոցի Դեմիրճյան փեղեցի 11 տան բնակիչ (Էլ.հասցե՝ hrayr.sukiasyan@gmail.com) Հրայր Սուքիասյանը դիմումով իր անհամաձայնությունն է հայտնել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 02.11.2020թ. թիվ 2011822819 որոշմանը՝ նշելով, որ <<Կանգ-գիծ>> գծանշումը հատել է լուսացույցի դեղին լույսի առկայությամբ:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ թիվ 2011822819 որոշումն ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները:

<< կառավարության <<<< ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 7-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ **դեղին ազդանշանն արգելում է երթևեկությունը** (բացառությամբ կանոնների 19-րդ կետով նախատեսված դեպքի) և նախազգուշացնում ազդանշանի առաջիկա փոփոխման մասին: Ըստ նույն որոշման 18-րդ կետի՝ լուսացույցի (բացի դարձափոխայինից) կամ կարգավորողի արգելող ազդանշանի դեպքում վարորդը պետք է կանգ առնի <<Կանգ-գիծ>> գծանշման (կամ 6.16՝<<Կանգ-գիծ>> նշանի) առջև, իսկ դրա բացակայության դեպքում՝ հատվող երթևեկելի մասի առջև՝ հաշվի առնելով կանոնների 93-րդ կետը, խոչընդոտ չստեղծելով հետիոտների համար և այլ վայրերում՝ լուսացույցի կամ կարգավորողի առջև՝ խոչընդոտ չստեղծելով թույլատրելի ուղղություններով երթևեկող տրանսպորտային միջոցների և հետիոտների համար: **Ըստ նույն որոշման 19-րդ կետի՝ դեղին ազդանշանը միանալու կամ կարգավորողը ձեռքը բարձրացնելու դեպքում այն վարորդները, որոնք հնարավորություն չունեն առանց կտրուկ արգելակելու կանգնել կանոնների 18-րդ կետում նշված տեղերում, կարող են շարունակել երթևեկությունը:**

Իրավախախտման PIN անհատական ծածկագրի տակ զետեղված տեսանյութի դանդաղեցված և դրվագային ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում այն փաստը, որ դիմումատուի արարքն արձանագրված խաչմերուկում առկա լուսացույցի վրա դիմումատուի <<Կանգ-գիծ>> գծանշումը հատելու պահին միացված է եղել լուսացույցի դեղին՝ արգելող ազդանշան: Այսպես՝

- տեսանյութի 10:44:29-րդ վարկյանին միանում է լուսացույցի դեղին արգելող ազդանշանը, երբ դիմումատուի տրանսպորտային միջոցը գտնվում էր «Կանգ-գիծ» գծանշման առջև,

- դիմումատուի տրանսպորտային միջոցը «Կանգ-գիծ» գծանշումը հատում է միայն տեսանյութի 10:44:30-րդ վայրկյանին, երբ դեռ շարունակվում էր միացված մնալ լուսացույցի դեղին արգելող ազդանշանը:

Տեսանյութի ուսումնասիրությունից պարզվել է նաև, որ լուսացույցի արգելող դեղին ազդանշանի ժամանակ դիմումատուի ավտոմոբիլը գտնվել է «Կանգ-գիծ» գծանշման առջև անշարժ վիճակում, ուստի հերքվում է նաև դիմումատուի կողմից ՀՀ կառավարության 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 19-րդ կետի պահանջի ռեժիմում արարք կատարելու հանգամանքը, քանի որ դիմումատուն հնարավորություն է ունեցել տրանսպորտային միջոցը կանգնեցնելու առանց կտրուկ արգելակելու:

Վերը նշված փաստերի վերլուծության արդյունքում դիմումատուի իրավախախտման կատարած լինելու փաստը կասկած չի հարուցում:

Այսպիսով, հիմնավորվել է, որ դիմումատուին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վերը նշված որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 02.11.2020թ. թիվ 2011822819 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Հրայր Սուքիասյանին:



Ե. Կարապետյան